ՀԱՅՈՑ ՀԱՅՐԱՊԵՏԸ ԿՐԿԻՆ ՓԱՐԻԶՈՒՄ

Ժամը 19-ին Փարիզ ժամանեց **Վեհափառ Հայրապետը**: Բուրժեի օդանավակայանում Հայոց Հայրապետին դիմավորեցին Ռումինիայի և Բուլղարիայի հայոց առաջնորդ **տ. Տիրայր եպս. Մարտիկյանը,** Արևմտյան Եվրոպայի հայրապետական պատվիրակի Փարիզի փոխանորդ **տ. Գյուտ եպս. Նագաշյանը,** Անգլիայի հայրապետական պատվիրակ և Լոնդոնի հայոց հոգևոր տեսուչ **տ. Ներսես եպս. Պոզապալյանը,** Ալֆորվիլի հայոց հոգևոր հովիվ **տ. Զարեհ վրդ. Թոփալյանը,** Փարիզի կրոնական ընկերակցության անունից՝ **Ալեքսանդր Օհանյանը,** փարիզահայ մտավորական **Կարպիս Զրբաշյանը** և ուրիշներ:

Վեհափառ Հայրապետն իջևանեց «Պլացա Աթենե» հյուրանոցում:

Ժամը 21-ին տեր և տիկին **Համազասպ** և **Ալիս Մոմճյաններն** իրենց հյուրընկալ հարկի տակ Հայոց Հայրապետին ընտանեկան մտերմիկ սեղանի շուրջ պատվեցին ճաշով, որին ներկա էին **տ. Սերովբե, տ. Կոմիտաս, տ. Տիրայր, տ. Գյուտ, տ. Ներսես սրբազանները, Արթուն Հատիտյանը, Գրիգոր Խանջյանը, տ. Անանիա աբեղան,** ինչպես նաև Մայր Աթոռի բարերար **տեր** և **տիկին Կարպիս Զրբաշյանները:**

Այս առթիվ **Կարպիս Զրբաշյանը** ս. Գրիգոր Լուսավորչի առաջին կարգի շքանշանակիրներ ֆրանսահայ **Գևորգ Պագրճյանի, Արծրուն Զրբաշյանի, Նապոլեոն Պուլլուքյանի, Կարպիս Ճնկտրյանի** և իր կողմից գնված ԺԶ դարի մի ընտիր ձեռագիր «Յայսմաւուրք» և երեք այլ արժեքավոր ձեռագրեր նվիրեց Հայոց Հայրապետին Երևանի Մեսրոպ Մաշտոցյան ձեռագրաց Մատենադարանի համար՝ արժանանալով Նորին Սուրբ Օծության և՛ օրհնությանը, և՛ երախտագիտությանը:

ՀԱՅՈՑ ՀԱՅՐԱՊԵՏԸ ՀՐԱԺԵՇՏ Է ՏԱԼԻՍ ՓԱՐԻԶԻՆ

Հուլիսի 5-ին, շաբաթ օրը, առավոտյան ժամը 11-ին, **Վեհափառ Հայրապետը** հրաժեշտ առավ Փարիզից և Իր շքախմբով մեկնեց Մոսկվա:

Բուրժեի օդանավակայանում Հայոց Հայրապետին ճանապարհեցին **տ. Սերովբե** և **տ. Գյուտ սրբազանները, տ. Զարեհ** և **տ. Նորվան վարդապետները,** Փարիզի կրոնական ընկերակցության անդամները, բույր եկեղեցիների և մամուլի ներկայացուցիչներ:

Հայոց Հայրապետին ճանապարհեց, հանուն Ֆրանսիայի արտաքին գործերի մինիստրության, պրոտոկոլի գրասենյակի պետ **Միշել Բերսոն:**

Հայոց Հայրապետին դեպի Մոսկվա ճանապարհեց նաև Ֆրանսիայում Սովետական Միության դեսպանատան առաջին քարտուղար **Հենրիկ Լիլոյանը:**